



ԵՐԵՎԱՆԻ
ԳԵՂԱՐՎԵՍՏԻ
ՊԵՏԱԿԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ
ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ԾՐԱԳԻՐԸ**

2012 – 2016 թթ.

Հաստատված է ԵԳՊԱ խորհրդի կողմից

**Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի
ռազմավարական ծրագիրը
2012-2016 թթ.**

2012թ.

Յուրաքանչյուր ժողովրդի մշակույթն անուղղակի առնչվում է նրա մտավոր և ֆիզիկական ունակությունների: Ինչպես նաև մտքի և զգացմունքի ճկունության հետ, միաժամանակ փաստում նրա ընկալունակության աստիճանը:

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ակունքները հասնում են հայ մշակույթի հազարամյա պատմության խորքերը: Դեռ 10-րդ դարից սկսած՝ հայկական բարձր տիպի դպրոցներում (Տաթևի) դասավանդվում էր «Նկարչություն» առարկան, իսկ Գլաձորի համալսարանում 13-րդ դարի վերջերին գործում էր հատուկ գրչության արվեստի խումբը, որտեղ հայ երիտասարդներին ուսուցանում էին նկարչական արվեստ և, հատկապես, մանրանկարչություն ու գրքարվեստ: 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին պետականություն չունեցող հայրենիքում ստեղծագործական բարձր թոփքների համար պայմանների բացակայությունը հայերին ստիպել էր Եվրոպայի և Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում ստեղծել հայ մշակութային օջախներ և շարունակել մասնակից լինել համաշխարհային գեղարվեստական շարժումներին:

Բազմադարյան հայ մշակութային կյանքում աննախադեպ երևույթ էր Երևանի գեղարվեստի պետական իստիտուտի ստեղծումը: Այն տեղի ունեցավ 1945 թ. ԽՍՀՄ Ժողկոմիտրիին կից բարձրագույն դպրոցի Համամիութենական կոմիտեի N335 հրամանով: Հայ շնորհալի երիտասարդներն այդուհետև հնարավորություն ստացան բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու մայր հայրենիքում:

Հիմնադրման պահին բուհն ուներ ընդամենը 2 բաժին՝ գեղանկարչություն և քանդակագործություն (22 ուսանող) 1953-ից մինչև 1994 թվականը գործել է թատերական ինստիտուտի հետ համատեղ: 1994թ. Առանձնացավ որպես ինքնուրույն բուհ, իսկ 2000թ. ՀՀ կառավարության որոշմամբ վերանվանվեց Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա:

2006-2011 թվականների համար նախատեսված ռազմավարական հնգամյա պլանի կատարման արդյունքում ակադեմիան նկատելի հաջողությունների է հասել Բոլոնիայի գործընթացի և կրթական բարեփոխումների առումներով: Այսպես.

- Վերջին տարիներին հերդրված կրթական բարեփոխումների արդյունքում բոլոր մասնագիտությունների գծով ակադեմիան անցել է եռաստիճան ուսուցման, մշակվել և հաստատվել են կրթական ծրագրերի հետևյալ մոդելները՝
 - բակալավրիատ՝ 4 տարի,
 - մագիստրատուրա՝ 2 տարի,
 - ասպիրանտուրա՝ 3 տարի:
- Բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերը հստակ տարանջատված են: Մագիստրոսի ուսումնական պլանը բակալավրի ուսումնական պլանից էականորեն տարբերվում է: Այն վերջինիս կրկնությունը չէ:
- 2007-2008 ուսումնական տարվանից ակադեմիայում ներդրվել է կրեդիտային համակարգը՝ կրթական կրեդիտները որպես ուսումնական ծրագրերի պարտադիր տարր ներմուծմամբ և ուսանողների ուսումնական տեղեկագրերում դրանց պարտադիր նշումով: Կրեդիտների փոխանցման գործընթացի համար որպես հիմք և ուղեցույց է ընդունվել համաեվրոպական ECTS կրեդիտային համակարգը:
- Ուսուցանվող բոլոր մասնագիտությունների գծով ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը վերանայվել, վերամշակվել են մոդուլային սկզբունքով, ուսումնական ծրագրերի բոլոր բաղադրամասերի աշխատաձևավալներն արտահայտվել են ուսանողի լրիվ ծանրաբեռնվածությունն արտահայտող ECTS կրեդիտներով:

- Աշխատանքներ են տարվել կրեդիտային հենքով մասնագիտական դասընթացների արդիականացման, առարկայական ծրագրերի վերանայման, վերամշակման ուղղությամբ:
- Վերանայվել է ուսանողների գիտելիքների գնահատման համակարգը: Ակադեմիան բոլոր մասնագիտությունների գծով գնահատման ամփոփիչ համակարգից անցել է գիտելիքների գնահատման ձևավորող համակարգին:
- Ակադեմիայում ստեղծվել է կրթական բարեփոխումների և ուսումնական վարչություն, ներդրվել ուսանողների գրանցման և ուսման առաջադիմության տվյալների կառավարման էլեկտրոնային համակարգ:
- Ավելի է կայունացել դասախոսական համակարգը, որը կարևոր երաշխիք է ուսման որակը անհրաժեշտ մակարդակով ապահովելու համար:
- Կայունացել է նաև ուսանողական համակարգը, ավելացել է արտասահմանցի ուսանողների քանակը:
- Որպես որակի գնահատման կարևոր քայլ՝ մշակվել է ինքնավերլուծության ծրագիր, և ստեղծվել որակի ներքին ապահովման կենտրոն:
- Ակադեմիան զգալի աշխատանքներ է տարել ուսանողների շարժունությունն ապահովելու ուղղությամբ: Ուսանողների և դասախոսների փոխանակման պայմանագրեր են կնքվել եվրոպական մի շարք բուհերի հետ: Գործին մեծապես նպաստել է «Տեմպուսի»-ի 4 ծրագրերում ակադեմիայի մասնակցությունը:
- Առանձին վերափոխություններ են կատարվել ակադեմիայի կառավարման համակարգում, հստակեցվել են բաժինների և վարչությունների գործառույթները:
- Ակադեմիայի կրթական բարեփոխումների և կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվական նյութերը տեղադրվել են ակադեմիայի կայքում և հրատարակվել առանձին գրքույկով:
- Ակադեմիայում ձևավորվել են մնայուն արժեքներ, որոնք միավորում են դասախոսների և ուսանողների մի քանի սերունդ և բնորոշում նրանց բացառիկ դերը հայ մշակույթի զարգացման գործում: Դրանցից կարևորվում են՝
 - կրթական ծրագրերը և մասնագիտական ուսուցման մեթոդիկան,
 - տասնամյակների ընթացքում ստեղծված դպրոցը և ակադեմիայի հաստատուն դիմանկարը
 - դասախոսական և ուսանողական կայուն համակարգը,
 - տասնամյակների ընթացքում որակավորված շրջանավարտները, որոնք հաջողությամբ նպաստել են ազգային մշակույթի զարգացմանը,
 - ուսանողների և դասախոսների ստեղծագործական մտքի զարգացմանն անհրաժեշտ բարոյահոգեբանական միջավայրը
 - ակադեմիայի ստեղծված արտաքին կապերը:

Ակադեմիան ներկայումս ունի երկու ֆակուլտետ՝

1. կերպարվեստի,

2. դիզայնի և կիրառական արվեստի:

Ուսանողների ընդհանուր քանակը (ներառյալ Գյումրու և Դիլիջանի մասնաճյուղերը) բակալավրիատում և մագիստրատուրայում 942 է, ասպիրանտները՝ 15, որից 6-ը արտասահմանցի են: Ակադեմիայում սովորող արտասահմանցի ուսանողների ընդհանուր քանակը 93 է:

Ընդունելություն է կատարվում 8 մասնագիտությունների գծով՝ գեղանկարչություն, քանդակագործություն, գրաֆիկա, կերպարվեստի պատմություն և տեսություն, դիզայն,

կիրառական արվեստ, հագուստի մոդելավորում, համակարգչային գեղարվեստական հանխագծում:

Գյումրու մասնաճյուղն ընդունելություն է կատարում 6 մասնագիտությունների գծով՝ գեղանկարչություն, գրաֆիկա, քանդակագործություն, կիրառական արվեստ, հագուստի մոդելավորում, դիզայն: Այն ներկայումս ունի 158 ուսանող: Դիլիջանի մասնաճյուղը՝ 1 մասնագիտության գծով՝ կիրառական արվեստ: Ունի 24 ուսանող: Ակադեմիան և մասնաճյուղերն ունեն համակարգչային լսարաններ, պահանջվող քանակի արվեստանոցներ, լաբորատորիաներ, գրադարան, ցուցասրահ: Կարևոր նշանակություն է տրվում տեղեկատվական ցանցի զարգացմանը:

2006-2011 ուսումնական տարիների ռազմավարական ծրագրի իրականացման արդյունքում նվաճված ձեռքբերումները հիմք են հանդիսանում անցնելու կրթական բարեփոխումների նոր մակարդակի և մշակելու ռազմավարակն նոր ծրագիր, որի իրականացման արդյունքում ակադեմիան ձգտում է դառնալու բարձրագույն ուսումնական հաստատություն՝

- որն իրականացրել է կրթական ծրագրերի հավատագրումը և ձգտում է ինտեգրվելու եվրոպական ուսումնական համակարգին,
- որն ավելի է ակտիվացնում արտաքին կապերը և ապահովում դասախոսների, ուսանողների, վարչական անձնակազմի շարժունությունը և պայմաններ ստեղծում, որ նրանք կարողանան օգտվել եվրոպական տարածքի կրթական ժառանգությունից, ներառյալ նրա ժողովրդավարական արժեքները,
- որն իր գոյության տասնամյակների ընթացքում ստեղծած ուսուցման ավանդույթները սերտորեն առնչում է ժամանակի ոգու և պահանջների հետ, դրան համապատասխան պարբերաբար վերանայում և վերափոխում է իր գործունեությունը:

Ակադեմիայի առաքելությունը

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի հիմնական առաքելություններն են՝

1. կերպարվեստի, կիրառական արվեստի և դիզայնի ոլորտների համար բարձր որակավորման մասնագետների պատրաստումը,
2. ստեղծագործական և գիտական բնույթի հետազոտական կրթական ծրագրերի մշակումն ու իրականացումը,
3. հասարակության համախմբմանն ու գեղագիտական ճաշակի բարձրացմանն ուղղված ծառայությունների իրականացումը:

Ակադեմիայի հիմնական նպատակները

Ակադեմիան մշակել և ներկայացնում է իր առաքելությունից բխող նոր ռազմավարական ծրագիր, որտեղ առաջնահերթ կարևորում է հետևյալ նպատակները.

1. կրթական ծրագրերի և դասավանդման մեթոդների բարեփոխումներն ու արդիականությունը,
2. ուսուցման որակի ապահովման գործընթացների հստակեցումն ու իրականացման մեխանիզմների մշակումը,

3. ակադեմիայի գործունեության հետազոտական ոլորտի զարգացումը,
4. ակադեմիայի միջազգային կապերի զարգացումը և ուսանողների շարժունության ակտիվացումը,
5. հասարակությանը մատուցվող ծառայությունները և դրանց իրականացման ուղիների հստակեցումը:

ՆՊՍՏԱԿ 1

Կրթական ծրագրերի և դասավանդման մեթոդների բարեփոխումներն ու արդիականացումը

Ակադեմիայի շրջանավարտների բարձր պրոֆեսիոնալիզմը և մրցունակությունը հիմնականում կախված են կրթական ծրագրերից և ուսուցման որակից: Մակայն որքան կարևոր են ուսուցման ծրագրերը, դրանց դրական փոփոխությունները, նույնքան կարևոր են նաև դասախոսական կազմի ստեղծագործական որակն ու դասավանդման մեթոդիկան: Այս առումներով կարևորվում է ակադեմիայի մերձեցումը եվրոպական բարձրագույն կրթական տարածքի և, հատկապես, եվրոպական մշակութային բուհերի ուսուցման սկզբունքներին, Բոլոնիայի գործընթացի պահանջներին: Իսկ դա ենթադրում է որակի մշակույթի ձևավորում և կրթակն մշտական բարեփոխումներ՝ անշուշտ կարևորելով ակադեմիայի հիմնական արժեքները, տասնյակ տարիների ընթացքում ձևավորված ուսուցման մեթոդներն ու ավանդույթները:

Արվեստի բուհում բակալավրիատի ծրագրով ուսուցման արդյունավետ կազմակերպման համար չափազանց կարևոր է ուսանողների ստեղծագործական ունակությունների գործոնը: Վերջինս թելադրում է ուսուցման տարբերակված մոտեցումներ՝ հիմք ընդունելով ուսանողների ոչ միայն ունակությունները, այլ նաև նախասիրությունները: Կարևորվում են ուսուցման գործընթացի հասարակության հարափոփոխ պահանջներին համարժեք կազմակերպման և դրական արդյունքի հասնելու գործոնները, որոնք էլ պետք է լինեն ուսուցման արդյունավետության հիմնական չափանիշները: Այս ամենի հաշվառմամբ են նաև ձևակերպվում և հրապարակվում ակադեմիայում սովորողների կողմից ձեռք բերվող կոմպետենցիաները:

Կրթական բարեփոխումների հոլովույթում կրթության որակին և ուսուցման մեթոդներին հատուկ ուշադրություն սևեռելը կարևորվում է նաև նրանով՝ որ ակադեմիայի շրջանավարտները գործունեություն են ծավալելու աշխատաշուկայի հարափոփոխ պայմաններում, հետևաբար ակադեմիայում նրանք պետք է ստանան այնպիսի հմտություններ, որ պատրաստ և ունակ լինեն հետագայում բազային այդ հիմքի վրա, ըստանհրաժեշտության, ինքնություն ստանալու նոր գիտելիքներ: Այդպիսի ունակություններ ուսանողները ձեռք են բերում այն պայմաններում, երբ բուհում ուսուցումը կազմակերպվում է ուսանող-դասախոս ներդաշնակ համագործակցության մթնոլորտում: Լավ դասախոսը ոչ թե տալիս է խնդրի ճիշտ պատասխանը, այլ օգնում ուսանողին որոնելու և ինքնություն գտնելու դրա լուծման ուղին: Այս բնույթի ուսուցումն ավելի արդյունավետ է և ուսանողի մոտ զարգացնում է ինքնուրույնություն, ճկունություն, նորն արագ ընկալելու և ինքնաստիպ լուծումներ գտնելու ունակություն: Մա հենց փոխանցելի հմտությունն է, որ ուսանողը ձեռք է բերում ակադեմիայում, և որն օգնում է նրան շարունակ նոր հմտություններ ձեռք բերելու և սովորելու ողջ կյանքի ընթացքում: Նման պայմաններում

փոխվում է դասախոսի դերը ուսուցման ընթացքում: Նա, փաստորեն, կառավարում և ուղղորդում է ուսանողին գիտելիքի յուրացման և կոմպետենցիաների ձեռքբերման գործընթացներում:

Այսպիսի մոտեցմամբ՝ ուսման որակի արդյունավետությունը, ինչպես նաև կրթական ծրագրերի և դասավանդման մեթոդների բարեփոխումներն ու արդիականացումն ապահովելու նպատակով ակադեմիան պետք է իրականացնի հետևյալ խնդիրները.

Խնդիր 1. *Կրթական ծրագրերի վերանայում և միջոցառումների մշակում դրանք եվրոպական կրթական չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ*

Վերջին տարիներին ակադեմիան կրթական ծրագրերը եվրոպական կրթական չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ կատարել է զգալի աշխատանք, որը հիմք ընդունելով՝ ծրագրում է բարեփոխումների հաջորդ փուլում՝

- ձգտել ակադեմիայի կրթական ծրագրերը եվրոպական արվեստի բուհերի հետ հնարավորինս համեմատելի, համադրելի և թափանցիկ դարձնելու,
- վերանայել մասնագիտացումները և հարկ եղած դեպքում հիմք ընդունելով ներքին (ուսանողներ, դասախոսներ, կառավարման համակազմը) և արտաքին շահառուների (շրջանավարտներ, գործատուներ, պրոֆեսիոնալ միություններ) պահանջարկները, ակադեմիայի նյութական ռեսուրսներն ու դասախոսական ներուժը՝ նախաձեռնել նոր մասնագիտությունների ուսուցում,
- կրթական ծրագրերի վերանայման գործընթացներում հաշվի առնել նաև ուսանողների և այլ շահառուների կարծիքները և հետաքրքրությունները,
- պարբերաբար ստեղծել կրթական ծրագրերի, կրեդիտային համակարգի ներդրման և գործնական կիրառման համար անհրաժեշտ մեթոդական և տեղեկատվական փաթեթ,
- միջոցներ ձեռնարկել ուսումնական գործընթացի վերափոխություններին ուսանողների իրազեկությունն ապահովելու համար,
- կարևոր նշանակություն տալ շրջանավարտների ձեռներեցության և կառավարման ունակությունների զարգացմանը,
- նպաստել ու խրախուսել ակադեմիայի ամբիոնների կողմից կրթական ծրագրերին համապատասխան ուսումնական և մեթոդական ձեռնարկների ստեղծմանն ու հրատարակմանը,
- բարձրացնել ուսանողների ինքնուրույն աշխատանքի դերը և համապատասխան փոփոխություններ մտցնել ուսումնական գործընթացում,
- ակտիվացնել ուսանողների անմիջական մասնակցությունը ուսումնառության գործընթացի պլանավորմանը և ուսումնառության այլընտրանքային հնարավորություններին, բարձրացնել այս գործերի կազմակերպման հարցում խորհրդատուների կոորդինացնող դերը, դրանցում ընդգրկել ակադեմիայի փորձառու դասախոսների,
- մեխանիզմներ մշակել, այսպես կոչված, դասախոսակենտրոն ուսուցումից ուսանողամետ ուսուցման մեթոդին անցումն ապահովելու համար,
- կատարելագործել ուսանողների գիտելիքների գնահատման համակարգը ուսումնառության որակը և ուսանողների շահագրգռվածությունը խթանելու տեսանկյունից,

- միջոցներ ձեռնարկել ուսանողների մասնագիտական հետաքրքրությունների հաշվառման և հնարավորինս բավարարման համար, կարևորել հետադարձ կապի գործոնը,
- առավել արդյունավետ դարձնել ուսանող-դասախոս համագործակցությունը,
- միջոցառումներ մշակել ուսանողների գործնական ունակությունների զարգացման համար, կատարելագործել ուսանողների պրակտիկան, միջոցներ ձեռնարկել հատկապես ավարտական կուրսի ուսանողների և ենթադրվող գործատուների միջև համագործակցություն ստեղծելու ուղղությամբ՝ հատկապես դիպլոմային թեմաների ընտրության հարցում,
- ուսումնասիրել և, ըստ անհրաժեշտության, ներառել ուսուցման մեթոդիկայի արտասահմանյան դրական փորձը:

Խնդիր 2. *Ուսանողական համակազմի պահպանում ու կայուն զարգացում*

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիան եղել և շարունակում է լինել հանրապետության կերպարավեստի, կիրառական արվեստի, դիզայնի և մշակույթի այլ ճյուղերի հիմնական բարձրագույն կրթօջախը: Իր ներուժի հաշվարմամբ նա ոչ միայն պահպանել, այլև վերջին տարիներին նաև նկատելի ավելացրել է իր ուսանողական համակազմը: Դրա հետագա կայուն զարգացումն ապահովելու նպատակով ակադեմիան պետք է իրագործի հետևյալ խնդիրները՝

- իրականացնի նաև ուսումնառության այլընտրանքային ծրագրեր, համապատասխանացնի դրանք միջազգայն չափանիշներին,
- իրականացնի շարունակական և լրացուցիչ կրթական ծրագրեր ու ծառայություններ բոլոր նրանց համար, ովքեր կարիք ունեն մշակույթի ոլորտի մասնագիտական վերապատրաստման կամ լրացուցիչ ուսումնառության,
- ձգտի միջազգայնացնելու ուսանողական համակազմը, կայուն դարձնելու և ունենալու ավելի մեծ թվով արտասահմանցի ուսանողներ,
- ձգտի լինելու ավելի գրավիչ ու մրցունակ,
- ապահովի հանրային վստահությունն ու ճանաչումը ոչ միայն հանրապետությունում, այլ նաև արտերկրներում,
- իրականացնի ակադեմիայի բոլոր կրթական ծրագրերի հավատագրումը,
- հատուկ ուշադրություն դարձնի կրթական ծառայության որակին,
- ակադեմիայի կրթական ծրագրերի մասին տարբեր միջոցներով տեղեկացնի ներքին և արտաքին շահառուներին,
- ապահովի կրթական ծրագրերի ու դրանց իրականացման գործընթացի համարժեքությունը,
- հստակեցնի ակադեմիայի ընդունելության հեռանկարային պլանը՝ հիմք ընդունելով նաև արտաքին պահանջարկը,
- կատարի մասնագիտական ուսուցման ներքին և արտաքին վերլուծություններ և դրանց արդյունքների հաշվառմամբ միջոցներ ձեռնարկի ակադեմիայի մրցունակությունն առավել բարձրացնելու ուղղությամբ,
- ստեղծի և իրականացնի ուսանողական համակազմի զարգացման միասնական ընդհանուր ակադեմիական ծրագիր՝ հաշվի առնելով մասնագիտությունների ուսուցման որակի ապահովման ներքին ռեսուրսները (դասախոսական, նյութատեխնիկական, ֆինանսական),

- ըստ մասնագիտությունների՝ սահմանի ընդունելության տարբերակված պահանջներ և այդ մասին նախապես տեղեկացնի դիմորդներին,
- աջակցի ուսանողների և շրջանավարտների աշխատանքի որոնման գործընթացին, ստեղծի մասնագիտական կողմնորոշման ծառայություն,
- խրախուսական միջոցներ ձեռնարկի ուսման առաջադիմությունը խթանելու և ուսանողների ստեղծագործական ներուժը զարգացնելու ուղղությամբ,
- միջոցներ ձեռնարկի պետական կրթաթոշակների և ուսումնական նպաստների առավել արդյունավետ և օբյեկտիվ տրամադրման, ինչպես նաև ուսումնական վարկերի նորաստեղծ համակազմի ընձեռած հնարավորությունների սահմաններում ուսանողներին աջակցելու ուղղությամբ,
- սահմանված կարգով իրականացնի ուսանողների ուսման վարձավճարների մասնակի գեղչեր, խրախուսելու նպատակով հատուկ վերաբերմունք ցուցաբերի վճարովի համակարգում սովորադիրների ուսման առաջադիմությանը,
- պահանջարկը հաշվի առնելով՝ կրթական նոր ծառայություններ առաջարկի ու իրականացնի,
- հրապարակի ուսուցանվող մասնագիտությունների բնութագրիչներն ու չափորոշիչները և այդ մասին իրազեկի շահառուներին:

Խնդիր 3. *Դիմորդների հոսքի կայունության սպասելիություն*

Այս խնդրի իրականացման նպատակով ակադեմիան պետք է՝

- կապերն ավելի ակտիվացնի մասնագիտական ուսումնարանների, միջնակարգ դպրոցների հետ, տարվա ընթացքում վերջիններիս շրջանավարտների համար կազմակերպի բաց դռների օր և նրանց ծանոթացնի ակադեմիայի ուսուցման ընթացքին, կրթական ծրագրերին,
- տարբեր ձևերով գովազդի ակադեմիայում ուսուցանվող մասնագիտությունները,
- կրթական ծրագրերը վերանայելիս մշտապես հաշվի առնի հնարավոր շահառուների պահանջները,
- միջոցներ ձեռնարկի ակադեմիայի գովազդը հայաստանից դուրս նույնպես կազմակերպելու ուղղությամբ՝ արտասահմանյան դիմորդներին հետաքրքրելու նպատակով, պարբերաբար վերանայի ակադեմիայի կայքը, հրատարակի տեղեկատվական բնույթի նյութեր, կազմակերպի արտասահմանյան փոխայցելություններ և այլն,
- ակտիվացնի կապերը սփյուռքի հայերի (նաև Արցախի) հետ, նպաստավոր պայմաններ ստեղծի ակադեմիայում նրանց մասնագիտական կրթության համար,
- ուսումնասիրի տարածաշրջանի պահանջարկը և անհրաժեշտության դեպքում ակադեմիայի ներուժը կիրառի դրանց համապատասխան ուսուցման կազմակերպելու ուղղությամբ,
- օտարերկրյա ուսանողների մասնագիտական ուսուցումը մատչելի ձևով կազմակերպելու նպատակով նախապատրաստական աշխատանքներ տանի լեզվական խնդիրների հաղթահարման համար:

Խնդիր 4. *Դասախոսական համակազմի կայունացում*

ԵԳՊԱ-ն իր ողջ գործունեության ընթացքում աչքի է ընկել որակյալ դասախոսական համակազմով: Այստեղ ընդգրկված են հանրապետության լավագույն արվեստագետները:

Բուհն իր խնդիրն է համարում այսուհետև նույնպես կադրային ճիշտ քաղաքականությամբ կարգավորել դասախոսական կազմի սերնդափոխության գործընթացը: Իսկ դա շատ կոդվերով կապված է ակադեմիայում ստեղծված տասնյակ տարիների ավանդույթներից և ներկա իրավիճակից, կոլեկտիվում տիրող բարոյահոգեբանական, ինչպես նաև ստեղծագործական մթնոլորտից:

Հատկապես երիտասարդ կադրերի ընդգրկումը և դասախոսական կազմի համալրումը շատ բանով կապված է ոչ միայն աշխատանքային ստեղծագործական միջավայրից, այլ նաև սոցիալական բազայի ընձեռած հնարավորություններից և աշխատանքի արդյունավետությունը խրախուսող համակարգից:

Այս խնդրի իրականացման համար ակադեմիան ծրագրում է՝

- վերլուծել և գնահատել դասախոսական ներուժը կրթական ծրագրերի և բուհի վերափոխումների տեսանկյունից,
- կազմել դասախոսական համակազմի կայունացման և համալրման ռազմավարական ծրագիր, հասնել դասախոսական միջին տարիքի նվազեցմանը. կատարելու համար մշակել հետբուհական կրթական հետազոտական ծրագրեր,
- մշակել դասախոսների աշխատանքի արդյունավետության խրախուսման և պարգևատրումների համակարգերը,
- մշակել և իրականացնել դասախոսների վերապատրաստման համակարգը,
- կատարելագործել դասախոսների տարակարգերի առկա չափանիշները, հստակեցնել գիտական կոչումների ներկայացման ընթացակարգը,
- ակտիվացնել կապերն արտասահմանյան արվեստի բուհերի հետ և դրանցում ընդգրկել ակադեմիայի դասախոսներին,
- նպաստել երիտասարդ դասախոսների ստեղծագործությունների ցուցադրումներին,
- երիտասարդ դասախոսների ներգրավման համար մշակել բարոյական և ֆինանսական խրախուսման ձևեր:

Խնդիր 5. Վարչակազմի որակական աճի ապահովում

Արդյունավետ կառավարման և կրթական ծրագրերի հաջող իրագործման հարցում կարևոր է ակադեմիայի վարչակազմի որակական աճի ապահովումը:

Այդ նպատակով նախատեսվում է՝

- պլանավորել ակադեմիայի կրթական ծրագրերի իրականացման համար պահանջվող հաստիքները, հասնել օպտիմալ քանակական հարաբերությունների դասախոս-ուսանող- ուսումնասօժանողական անձնակազմ հարաբերությունների թվաքանակների միջև,
- աստիճանաբար երիտասարդացնել ուսումնավարչական անձնակազմը և ապահովել աշխատանքային փորձի փոխանակումն ու ժամանակի պահանջների կիրառումը,
- մշակել մեխանիզմներ վարչական անձնակազմի որակի բարելավման և այդ գործում արտասահմանի առաջավոր փորձի կիրառման ուղղությամբ,
- նախադրյալներ ստեղծել վարչակազմի համար աշխատանքային նպաստավոր պայմանների ստեղծման, համակարգչային տեխնիկայի ներդրման և աշխատանքային գործունեության մեջ այն կիրառելու ուղղությամբ,
- հաստիքների պլանավորման հարցում հասնել առավել օպտիմալության
- կազմակերպել վարչակազմի կատարելագործման դասընթացներ՝ կառավարման նոր մեթոդների ներդրման և յուրացման նպատակով,
- մշակել վարչակազմի երիտասարդացման ծրագրեր:

Խնդիր 6. Բարոյահոգեբանական առողջ և կոլեգիալ միջավայրի պահանջում ու զարգացում

Ուսուցման որակի արդյունավետության բարձրացման գործում չափազանց կարևոր գործոն է աշխատանքային միջավայրը: Բարոյական բարձր արժեքների հիմքի վրա ձևավորված առողջ աշխատանքային միջավայրը և հարցերի լուծման կոլեգիալությունը դրականորեն են անդրադառնում իրականացվող կրթական ծառայությունների որակի վրա: Այդ խնդիրը ակադեմիայի ռազմավարության հիմնական ուղղություններից է:

Խնդրի լուծման նպատակով կարևորվում են հետևյալ պահանջները.

- ակադեմիայի ավանդույթների և արդի հրամայականների հիմքի վրա պահմանել և ըստ անհրաժեշտության զարգացնել տասնամյակների ընթացքում ակադեմիայում ստեղծված արժեքների համակարգը և աշխատանքային վարքագծի կանոնները,
- ակադեմիայի ընդհանուր շահերը համատեղել անհատի շահերի հետ, զարգացնել կոլեկտիվ պատասխանատվության զգացումը,
- զարգացնել ուսանողների և դասախոսների արդյունավետ համագործակցությունը և փոխըմբռնումը,
- բարելավել տեղեկատվության տարածումն ակադեմիայում, ապահովել որոշումների ընդունման թափանցիկությունը,
- աջակցել ու խրախուսել երիտասարդ դասախոսների դրական նախաձեռնությունները, ապահովել դասախոսական կազմի առողջ սերնդափոխությունը,
- առավել մեծ թվով դասախոսներ ընդգրկել ակադեմիական որոշումների ընդունման գործընթացում, ակտիվացնել նրանց հետաքրքրությունն ու մասնակցությունը ակադեմիայի կյանքին,
- նպաստել ակադեմիայի վարչակազմի համագործակցությանը հասարակական կառույցների՝ արհմիության և ուսխորհրդի հետ,
- խթանել կոլեկտիվի հանգստի, ժամանցի և այլ միջոցառումների կազմակերպումը:

Խնդիր 7. Ակադեմիայի նյութախնդիրական և ֆինանսական ռեսուրսների բարելավում, դրանց արդյունավետ կառավարման ապահովում՝ որպես կրթական ծրագրերի իրականացման երաշխիք

Ակադեմիայում ուսման որակն անհրաժեշտ մակարդակով ապահովելու գործում կարևոր դեր ունի նաև ուսուցման նյութախնդիրական բազան, ֆինանսական ռեսուրսները, ուսումնական տարածքների հարմարավետությունը: Ղեկավարության խնդիրն է մշտապես ուշադրության կենտրոնում ունենալ կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ տարածքների ձեռքբերումը, եղած ուսումնական մասնաշենքերի տեխնիկական վիճակի համարժեք գնահատումը, դրանց պարբերական վերանորոգման ծրագրերի իրականացումը: հատուկ ուշադրություն պետք է դարձվի նաև Գյումրու և Դիլիջանի մասնաճյուղերի ուսումնական շենքերի վերանորոգման փուլային ծրագրերի մշակմանը: Ուշադրության կարիք ունի նաև հնացած լաբորատորիաների, արվեստանոցների վերակառուցումը՝ ժամանակի պահանջներին համապատասխան: Կարևոր է նաև ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկայի համար Դիլիջանի մասնաճյուղում պայմանների ստեղծումը, ակադեմիայի կենտրոնական մասնաշենքի դահլիճի վերանորոգումը: Այս ծրագրերի իրականացման համար օգտագործել ոչ միայն ակադեմիայի ֆինանսական միջոցները, այլ նաև հովանավորողների աջակցությունը:

Այս խնդրի լուծման համար ակադեմիան պետք է՝

- իրականացնի մայր բուհի մասնաշենքերի տեխնիկական փորձաքննություն, կազմի վերանորոգումների հեռանկարային ծրագիր և ապահովի դրա փուլային իրականացումը,
- գնահատի լսարանների, արվեստանոցների, լաբորատորիաների առկա վիճակը և կարգի բերի դրանք ուսուցման կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան,
- առավել արդյունավետ օգտագործի ոչ միայն ուսումնական, այլ նաև օժանդակ տարածքները,
- սկսի Շորժայում՝ ակադեմիայի ձեռք բերած տարածքում, ուսանողների պրակտիկայի կազմակերպման պայմանների ստեղծման աշխատանքները (կլառույցներ, արվեստանոցներ),
- Դիլիջանի մասնաճյուղում պայմաններ ստեղծի ուսանողների ամառային պրակտիկայի կազմակերպման համար,
- նպաստի Գյումրու և Դիլիջանի մասնաճյուղերի զարգացման և հեռանկարային ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ստեղծմանը,
- ապահովի ակադեմիայի և մասնաճյուղերի ուսումնական լաբորատորիաներում աշխատանքի անվտանգությունը,
- նպաստի գրադարանի և ընթերցասրահի պայմանների բարելավմանը:

Ակադեմիայի ուսումնական գործընթացի և կրթական ծրագրերի իրականացման երաշխիք է նաև նրա ֆինանսական կայունությունը:

Դրա համար չաձազանց կարևոր է պետական բյուջեի հասկացումներից բացի՝ արտաբյուջետային եկամուտների հավելումների աճի ապահովումը:

Այլ լերպ ասած՝ ֆինանսական լրացուցիչ աղբյուրների որոնումը ակադեմիայի համար կարևոր ռազմավարական խնդիր է: Այդ նպատակի իրականացման համար բավարար չեն արտաբյուջեի ներկա աղբյուրները (վճարովի ուսուցման համակարգը, հովանավորների ֆինանսական աջակցությունը): Ակադեմիան իր ներուժը պետք է օգտագործի, ավելի նախաձեռնող լինի դրամաշնորհների, վճարովի տարբեր ծառայությունների և այլ միջոցառումների միջոցով եկամուտի նոր աղբյուրներ գտնելու ուղղությամբ: Կարևոր է նաև եզած ֆինանսական ռեսուրսների նպատակային ու համաչափ օգտագործումը ակադեմիայի ռազմավարական ծրագրի իրականացման և ուսուցման որակի կատարելագործման նկատառումով:

Նախատեսվում է ֆինանսական պլանավորումը համապատասխանեցնել և առնչել նրա ռազմավարական խնդիրների իրականացման հետ:

Այդ խնդրի լուծման համար ակադեմիան պետք է՝

- մշակի ռազմավարական պլանավորում գործունեության բոլոր ոլորտների համար, պլանավորի ուսանողների համակազմի աճը, ակնկալվող ֆինանսական ռեսուրսները, դրանց համաչափ բաշխումն ըստ ռազմավարական խնդիրների իրականացման, աշխատավարձի ֆոնդը և վերջինիս աճի հնարավորությունը,
- ապահովի ֆինանսների արդյունավետ և թափանցիկ օգտագործումը,
- իրականացնի տարեկան բյուջեի պլանավորում և հաշվետվություն,
- ապահովի կայուն ֆինանսական բազա և միջոցներ ձեռնարկի դրանց աճի համար,
- ձեռնարկի ֆինանսական միջոցների ներհոսքը կարգավորող միջոցներ,

- ապահովի պետական բյուջետային ֆինանսավորման կայուն աճ՝ պետական կրթական ծրագրերին ակադեմիայի ակտիվ մասնակցության միջոցով,
- միջոցներ ձեռնարկի ակադեմիայի ծրագրերին ու ծառայություններին կոմերցիոն բնույթ տալու համար,
- արտաբյուջետային միջոցների ձևավորման գործընթացը դարձնի թափանցիկ, դրան մասնակից դարձնի ակադեմիայի ամբիոններին, ֆակուլտետներին,
- ընդլայնի ակադեմիայի վճարովի ծառայությունների ոլորտը,
- մշակի առանձին մասնագիտությունների ուսուցման ինքնարժեքի վերլուծություն և դա հաշվի առնի ուսուցման վարձավճարի հաշվարկման ժամանակ,
- մասնագիտությունների ցանկն ու ուսանողների ընդունելության քանակը պլանավորելիս հաշվի առնի մասնագիտական ուսուցման ինքնարժեքի և եկամտաբերության ցուցանիշը,
- հնարավորինս ավելի շատ դրամաշնորհային ծրագրեր իրականացնի:

Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարումն ապահովելու նպատակով պետք է՝

- կատարելագործել ակադեմիայի ֆինանսական կառավարումը՝ ֆինանսական գործունեության նորմատիվային բազայի հետագա զարգացման, կառավարման, տեղեկատվական համակարգերի օգտագործման և վերլուծության, կադրային ճիշտ քաղաքականության միջոցով,
- մշակել և ներդնել էլեկտրոնային, ջրի, գազի և նյութական այլ ռեսուրսների խնայողության միջոցառումներ,
- օպտիմալացնել ակադեմիայի վարչական ծառայությունների աշխատանքը և համապատասխանաբար նվազեցնել ծախսերը,
- մշակել ակադեմիայի տարբեր տարակարգերի հաստիքների արդյունավետ օգտագործման համակարգը, խնայողաբար օգտագործել կադրային հաստիքները,
- մշակել և ներդնել աշխատողների նյութական խրախուսման մեխանիզմ՝ հիմք ընդունելով աշխատանքի վերջնական արդյունքը:

ՆՊՍՏԱԿ 2

Ուսուցման որակի ապահովման գործընթացների հստակեցումն ու իրականացման մեխանիզմների մշակումը

Որակի ապահովման գործընթացը ակադեմիայի գործունեության կարևոր մասն է: Այն միտված է հատկապես ուսուցման որակի պահպանմանը և պարբերաբար բարելավմանը: Այդ նպատակով ակադեմիան պետք է մշակի և ներդնի որակի ապահովման նոր համակարգ և համապատասխանեցնի այն մշակույթի ոլորտի բարձրագույն կրթության եվրոպական չափանիշներին:

Այդ նպատակի իրականացման համար պետք է լուծվեն հետևյալ խնդիրները.

Խնդիր 1. Ակադեմիայի որակի ապահովման “Կենտրոնի” գործունեության ծրագրի հստակեցում

Անհրաժեշտ է.

- մշակել որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը,
- մեխանիզմներ մշակել կրթական ծրագրերի և ակադեմիայի այլ գործառույթների վերաբերյալ տվյալների հավաքագրման, վերլուծության համար և ապահովել, ըստ անհրաժեշտության, դրանց օգտագործման գործընթացը,
- մշակել մշտադիտարկումների մեխանիզմներ, որոնց միջոցով վերլուծել առկա վիճակը, բացահայտել բուհի ուժեղ և թույլ կողմերը, մշակել թերությունների շտկման ուղիները, նպաստել ակադեմիայի բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը,
- որակի ապահովման գործընթացների կառավարման համար տրամադրել մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ,
- պարբերաբար վերանայել և կատարելագործել որակի ապահովման համակարգը:

Խնդիր 2. Որակի ապահովման ընթացքի թափանցիկության ապահովում

Անհրաժեշտ է.

- որակի ապահովման գործընթացներում ընդգրկել ներքին և արտաքին շահառուներին,
- ակադեմիայի կրթական ծրագրերի իրականացման որակի մասին տեղեկատվություն տալ ներքին և արտաքին շահառուներին, կատարելագործել ուսուցման որակի գնահատման չափանիշների թափանցիկությունը,
- մեխանիզմներ մշակել կրթական ծառայության որակի հաշվետվողականության ապահովման համար:

Խնդիր 3. Որակի ապահովման մեխանիզմների մշակում

Անհրաժեշտ է.

- հստակեցնել ակադեմիայի կրթական ծրագրերի մշակման, հաստատման և իրականացման մեխանիզմները,
- մեխանիզմներ մշակել ակադեմիայի հիմնական առաքելությունից բխող խնդիրների և կրթական ծրագրերի բովանդակությունն ու համարժեքությունն ապահովելու համար,
- մեխանիզմներ մշակել կրթական ծրագրերի բովանդակությունը և ուսուցման համարժեքությունն ապահովելու համար,
- ուսուցման արդյունավետության ստուգման համար վերլուծել և առաջարկներ անել ուսանողների ամփոփիչ ատեստավորման համակարգը կատարելագործելու ուղղությամբ,
- ապահովել ուսուցման որակի գնահատման միասնական պահանջներ և չափանիշներ մայր բուհում և մասնաճյուղերում, մշակել դրանց ստուգման մեխանիզմները,
- մեխանիզմներ մշակել մատուցվող կրթական ծառայությունների համադրելիության, մրցունակության և թափանցիկության ապահովման ուղղությամբ,
- մեխանիզմներ մշակել մասնագիտական կրթական ծրագրերի գնահատման համար,
- մեխանիզմներ մշակել ակադեմիայի ինստիտուցիոնալ հավատագրման գործընթացը նախապատրաստելու համար,
- մեխանիզմներ մշակել ակադեմիայի մասնագիտական կրթական ծրագրերի հավատագրման գործընթացը նախապատրաստելու համար:

Խնդիր 4. Ակադեմիայի կառավարման համակարգի կատարելագործում

Ակադեմիայի հետագա զարգացումն ու ուսուցման որակն ապահովելու, ինչպես նաև նրա առջև դրված ռազմավարական խնդիրներն իրականացնելու նպատակով ակադեմիան ծրագրում է վերակառուցել կառավարման առկա համակարգերը, արդիականացնել դրանք, բարելավել վարչական ծառայությունների որակը: Կառավարման գործընթացը տանել այն ուղղությամբ, որ հստակեցվեն հիմնական գործառույթները, մարդկանց աշխատանքային պարտականություններն ու իրավունքները, համագործակցություն ապահովվի ստորաբաժանումների միջև: Ընդհանուր որոշումների կայացման գործում ապահովել կոլեգիալությունն ու թափանցիկությունը: Մշակել ակադեմիայի ողջ գործունեության որակի գնահատման չափանիշները, որոնց միջոցով պարբերաբար իրականացվեն որակի վերլուծություններ: Այդ նպատակով անհրաժեշտ է՝

- վերլուծել կառավարման համակարգը և նրա համարժեքությունը ակադեմիայի ռազմավարական խնդիրների իրականացմանը,
- նոր համակարգի պահանջներին համապատասխան՝ վերափոխել և օպտիմալացնել ակադեմիայի կազմակերպական կառուցվածքը,
- ռազմավարական ծրագրեր մշակել ակադեմիայի բոլոր կառույցների և մասնաճյուղերի համար,
- մշակել ակադեմիայի գործունեության որակի գնահատման վերլուծական կառույց,
- ակադեմիայի կառավարման գործընթացում կիրառել ժամանակակից մենեջմենթի մեթոդներ և ապահովել անձնակազմի վերապատրաստում այդ ուղղությամբ,
- ապահովել կառավարման տարբեր օղակների փոխկապակցությունն ու պարտականությունների և լիազորությունների հստակեցումը,
- բարելավել կառավարման համակարգի տեղեկատվական սպասարկումը,
- ակտիվացնել ուսանողների մասնակցությունը ակադեմիայի կառավարման գործում,
- բարձրացնել ուսխորհրդի դերը Բոլոնիայի գործընթացի հետ կապված ակադեմիայի ծրագրային բարեփոխումներում,
- աջակցել ուսխորհրդի արտաքին կապերի ակտիվացմանը:

Խնդիր 5. Տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառման ապահովում

Ակադեմիայի հետագա զարգացման համար կարևորվում է կրթական ծրագրերի ապահովությունը տեղեկատվական ռեսուրսներով: Նշանակալից է նաև ուսանողներին և դասախոսներին տեղեկատվական ռեսուրսների մատչելիության ապահովումը:

Այդ նպատակով ծրագրվում է՝

- ուսումնասիրել ակադեմիայի տեղեկատվական ռեսուրսների վիճակն ու կատարելագործել այն,
- մշակել տեղեկատվական ռեսուրսների զարգացման փուլային ծրագրեր,
- նոր նյութերով պարբերաբար թարմացնել ակադեմիայի տեղեկատվական կայքը,
- ստեղծել գրադարանի էլեկտրոնային սրահ և ապահովել դրա մատչելիությունն ուսանողների և դասախոսների համար,
- հասնել դասավանդման որոշակի քանակի ապահովվածությանը էլեկտրոնային ուսուցման ուսումնամեթոդական նյութերով,
- ամեն տարի հրատարակել և ուսանողներին ու դասախոսներին տրամադրել ակադեմիայի տեղեկատվական «Ուղեցույցը»,
- կազմակերպել աշխատակիցների վերապատրաստում տեղեկատվական համակարգից օգտվելու ուսուցման նպատակով:

ՆՊԱՏԱԿ 3

Ակադեմիայի գործունեության հետազոտական ոլորտի զարգացումը

Ակադեմիան նպատակ ունի համարժեքորեն արձագաքքելու Բոլոնիայի գործընթացի զարգացումներին, վերափոխելու և եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու նաև հետազոտողի ծրագրերը, այն դիտելու որպես մասնագիտական առաջընթացի և ուսուցման որակի բարձրացման խթան, իսկ ռազմավարական զարգացման գործընթացներում՝ ուսուցման ընթացքի կարևոր մաս: Նշված նպատակին հասնելու համար բուհը պետք է իրագործի հետևյալ խնդիրները.

Խնդիր 1. *Կրթական ծրագրերում կրեդիտների հատկացում հետազոտական աշխատանքներին*

Անհրաժեշտ է.

- ակադեմիայի մասնագիտական կրթական ծրագրերում (հատկապես մագիստրոսական) ընդգրկել նաև հետազոտական ոլորտը՝ համապատասխան կրեդիտներով,
- ասպիրանտների համար մշակել և իրականացնել հետազոտական ծրագիր՝ համապատասխան կրեդիտներով և ասպիրանտուրայի շրջանավարտներին տալ հետազոտողի վկայական,
- հետազոտական թեմաների ընտրությունը կատարել մշակույթի զարգացման արդի պահանջների հաշվառմամբ,
- պլանավորել և հնարավորինս կոորդինացնել դասախոսների հետազոտական աշխատանքները,
- կազմել և իրականացնել դասախոսների վերապատրաստման և կատարելագործման ծրագրեր, դրանցում կարևորել նաև հետազոտական ոլորտը,
- պայմաններ ստեղծել ակադեմիայի դասախոսների, ասպիրանտների գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների հրատարակման համար,
- աշխատել ավելի մեծ թվով արտասահմանցիներ ընդգրկել մագիստրատուրայի և ասպիրանտուրայի հետազոտական ծրագրերում:

Խնդիր 2. *Պասախոսների հետազոտական գործունեության խրախուսում*

Անհրաժեշտ է.

- մշակել դասախոսների աշխատանքային գործունեության արդյունավետության գնահատման համակարգը՝ որպես առաջնահերթ կարևորություն հիմք ընդունելով ստեղծագործական, հետազոտական ինչպես նաև բուհական մանկավարժական աշխատանքների արդյունքները, դրանք հաշվի առնել դասախոսական թափուր տեղերի մրցույթի և աշխատավարձի խրախուսման ժամանակ,
- դասախոսական կադրերի ընտրության հարցում կարևոր նշանակություն տալ թեկնածուների ինչպես պրակտիկ ստեղծագործական, այնպես էլ հետազոտական ակտիվությանը,

- իրախուսամն մեխանիզմներ մշակել հետազոտական ծրագրեր իրականացնող՝ հատկապես երիտասարդ դասախոսների որակական աճն ապահովելու ուղղությամբ, ընդհուպ՝ աշխատավարձի բարձրացում, պարգևատրում, բնակարանային պայմանների բարելավում և այլն:

Խնդիր 3. Համատեղ հետազոտական ծրագրերի մշակում

Անհրաժեշտ է.

- այլ բուհերի, ինչպես նաև ՀՀ ազգային ակադեմիայի արվեստի ինստիտուտի հետ առնչություններում կարևորել համատեղ հետազոտական ծրագրերի մշակումը և հնարավորինս իրականացնել այն,
- նպաստել ասպիրանտների և մագիստրանտների շարժունությանը և գործնական աջակցություն ցուցաբերել համատեղ հետազոտությունների գործում,
- նպաստել ակադեմիայի դասախոսների և ասպիրանտների ինտեգրմանը միջազգային գիտական նախագծերում,
- ձգտել ակադեմիայի գիտական հետազոտությունների միջազգայնացմանը և եվրոպական մշակութային հետազոտական տարածքին ինտեգրմանը:

ՆՊՍՏԱԿ 4

Ակադեմիայի միջազգային կապերի զարգացումը և ուսանողների շարժունության ակտիվացումը

Ակադեմիայի արտաքին կապերը մեծապես նպաստում են ոչ միայն ուսուցման որակին, այլ նաև արտաքին շուկայում ակադեմիայի վարկի բարձրացմանը, խթանում ուսանողների և դասախոսների շարժունությունը:

Ռազմավարական գործընթացներում հատուկ կարևորություն տալով արտաքին կապերին՝ ակադեմիան ծրագրում է ի կատար ածել հետևյալ խնդիրները՝

- ակտիվացնել ակադեմիայի արտաքին կապերի վարչության աշխատանքը, այն դարձնել ավելի թափանցիկ,
- արտաքին կապերի վարչության գործունեության մեջ ընդգրկել ավելի շատ ուսանողներ և դասախոսներ,
- մշակել արտաքին համագործակցության ծրագիր, այդ մասին տեղեկացնել շահառուներին,
- զարգացնել համագործակցությունը արտասահմանի արվեստի առաջատար բուհերի հետ, մշակել համատեղ ուսումնական ծրագրեր և հնարավորինս համապատասխանեցնել որակավորումների աստիճանները,
- ակտիվացնել և իրախուսել ուսանողների և դասախոսների շարժունությունը և փոխանակման ծրագրերը,
- մշակել և իրականացնել ուսանողների կրեդիտների փոխանցման կարգը,
- օժանդակել ուսանողների դրամաշնորհային ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,
- իրախուսել և ավելի ակտիվացնել ակադեմիայի մասնակցությունը միջազգային դրամաշնորհային ծրագրերին,

- զարգացնել պայմանագրային հարաբերությունները ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտասահմանյան երկրներում,
- ընդլայնել կապը ակադեմիայի շրջանավարտների հետ և փնտրել նոր հովանավորներ, ավելացնել ակադեմիայի հովանավորների ներդրումների ծավալը:

ՆՊԱՏԱԿ 5

Հասարակությանը մատուցվող ծառայությունները և դրանց իրականացման ուղիների հստակեցումը

Մշակույթը անցյալն ու ապագան իրար միացնող շղթայի ամենահուսալի հանգույցն է: Ակադեմիան իր գոյության տասնամյակների ընթացքում իր ծառայությամբ և առաքելությամբ մեծապես նպաստել է, որ այդ հանգույցը ժամանակի ոգուն համահունչ, ամուր ու կայուն լինի: Ակադեմիայի տված շրջանավարտների ջանքերով է, որ այսօր նույնպես, ինչպես պատմական հանգրվաններում, մեր ժողովուրդը շարունակում է մշակութային արժանապատիվ երկխոսությունը քաղաքակիրթ աշխարհի հետ: Միանշանակ պիտի փաստել, որ մշակույթը համախմբում է նաև ազգին ու հասարակությանը: Եվ այդ գործում նույնպես անգնահատելի է ԵԳՊԱ-ի դերն ու նշանակությունը: Վերջին տարիների կրթական բարեփոխումների և, հատկապես, արտաքին առնչությունների շնորհիվ ակադեմիայում մասնագիտական ուսուցման որակի նշաձողը բարձրացել է որակական նոր աստիճանի: Դա ազգային մշակույթի զարգացման հեռանկարի՝ կնշանակի նաև ակադեմիայի կողմից հասարակությանը մատուցվող ծառայությունների բարձր որակի լավագույն գրավականն է: Բուհը ծրագրում է այսուհետև նույնպես կարևորել ու հատուկ նշանակության տալ իր գործունեության այս ոլորտին և նպաստել հասարակության համախմբմանն ու առաջընթացին: Այդ նպատակով պետք է իրականացնի հետևյալ խնդիրները՝

Խնդիր 1. Նպաստում ազգային մշակույթի առաջընթացին

Այս խնդրի իրականացման համար ակադեմիան ամենից առաջ պետք է՝

- ամենայն պատասխանատվությամբ իրականացնի կրթական ծրագրերը, արդի մշակույթի պահանջներին համապատասխան բարեփոխումներ անի դրանցում, պատրաստի բարձր որակավորման մասնագետներ արվեստի տարբեր ոլորտների համար,
- ակադեմիայի շրջանավարտներին նախապատրաստի ոչ միայն ստեղծագործական գործունեության, այլ նաև մշակույթի ոլորտի նորարարության համար, որը, բնականաբար, մեծապես կնպաստի հասարակական առաջընթացին,
- կրթական ծրագրերում կարևորի և քարոզի ինչպես ազգային, այնպես էլ համամարդկային մշակութային արժեքները և հումանիստական գաղափարները,
- ուսումնասիրի առկա վիճակը, պահանջարկը և իր առաքելությունից բխող կրթական նոր ծրագրեր առաջարկի հասարակությանը,
- տարբեր միջոցներով (այդ թվում նաև ակադեմիայի կայքով) հրապարակի ուսուցանվող մասնագիտությունների բնութագրիչներն ու չափորոշիչները և այդ մասին իրազեկի հանրությանը,

- հանրապետության մշակութային զարգացման միտումներին համահունչ՝ ապակենտրոնացնի հատկապես կիրառական արվեստի, դիզայնի, համակարգչային գրաֆիկայի մասնագիտական ուսուցումը ոչ միայն մայրաքաղաքում, այլ նաև հանրապետության տարբեր տարածքներում՝ հիմք ընդունելով տեղի ստեղծագործական ներուժն ու պահանջարկը,
- հետադարձ կապն ակտիվացնելու համար համագործակցի հանրապետության մշակութային կարրևոր օջախների՝ ՀՀ ԳԱԻ-ի, ՀՀ ազգային պատկերասրահի, թանգարանների, ստեղծագործական միությունների, համատեղ համագործակցային գործունեության ծավալի (ուսանողների պրակտիկա, ցուցադրումներ, քննարկումներ, գիտաժողովներ և այլն):

Խնդիր 2. Հասարակության հետ կապի ակտիվացում, ակադեմիայի գործունեության, խնդիրների, ծրագրերի թափանցիկության և հասարակության գեղագիտական դաստիարակության նպաստում

Այս խնդրի լուծման համար ակադեմիան պետք է՝

- դառնա գեղագիտական նոր գաղափարների քարոզիչն ու ոգեշնչողը,
- կրթական ծառայություններ մատուցելուց բացի՝ դառնա նաև մշակութային կենտրոն,
- կազմակերպի մշակութային միջոցառումներ (ցուցահանդեսներ, գիտաժողովներ, արվեստի գործիչների հոբելաններ, ցուցահանդեսների քննարկումներ), որոնց մասնակից դարձնի ոչ միայն դասախոսներին և ուսանողներին, այլ նաև հանրությանը,
- ՀՀ նկարիչների միությունում կազմակերպվող ամենամյա ավարտական դիպլոմային աշխատանքների պաշտպանությունը շարունակի կատարել հրապարակային և դրանց մասնակից դարձնի ապագա հնարավոր գործատուներին և այլ շահառուներին,
- ակադեմիայի ցուցասրահում կազմակերպվող ցուցահանդեսներին հրավիրի հանրապետության բուհերի ուսանողներին, դպրոցների աշակերտներին, և առհասարակ, երիտասարդությանը, նրանց համար կազմակերպի արվեստի տարբեր հարցերի շուրջ քննարկումներ,
- ակադեմիայի ուսանողների և դասախոսների ջանքերով արվեստի տարբեր թեմաներով զեկուցումներ կազմակերպի ՀՀ զինված ուժերի զորամասերում, միջնակարգ դպրոցներում,
- դասախոսական ուժերով հաճախակի հանդես գա հանրային հեռուստահաղորդումներում, ռադիոհաղորդումներում, մամուլում,
- ակադեմիայի ընդհանուր շահերը համատեղի հասարակության շահերի հետ:

**Ընթացիկ ծրագիր և արդյունքների գնահատում
Ուսումնական գործընթաց
2012-2016թթ.**

Գլխավոր	Ռեկտորատ
Ստորաբաժանումներ	Կրթական բարեփոխումների և ուսումնական վարչություն, ֆակուլտետներ, ամբիոններ, արտաքին կապերի վարչություն, մարդկային ռեսուրսների վարչություն, ֆինանսների և հաշվապահական վարչություն
<p align="center">Ակադեմիայի առաքելությունը</p> <p>Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի հիմնական առաքելություններն են.</p> <p>ա) կերպարվեստի, կիրառական արվեստի և դիզայնի ոլորտների համար բարձր որակավորման մասնագետների պատրաստումը,</p> <p>բ) ստեղծագործական և գիտական բնույթի հետազոտական կրթական ծրագրերի մշակումն ու իրականացումը,</p> <p>գ) հասարակության համախմբմանն ու գեղագիտական ճաշակի բարձրացմանն ուղղված ծառայությունների իրականացումը:</p> <p align="center">Ակադեմիայի հիմնական նպատակները</p> <p>Ակադեմիան մշակել և ներկայացնում է իր առաքելությունից բխող նոր ռազմավարական ծրագիր, որտեղ առաջնահերթ կարևորվում են հետևյալ նպատակները.</p> <p>ա) կրթական ծրագրերի և դասավանդման մեթոդների բարեփոխումն ու արդիականացումը,</p> <p>բ) ուսուցման որակի ապահովման գործընթացների հստակեցումն ու իրականացման մեխանիզմների մշակումը,</p> <p>գ) ակադեմիայի գործունեության հետազոտական ոլորտի զարգացումը,</p> <p>դ) ակադեմիայի միջազգային կապերի զարգացումը և ուսանողների շարժունության ակտիվացումը,</p> <p>ե) հասարակությանը մատուցվող ծառայությունների և դրանց իրականացման ուղիների հստակեցումը</p>	

ՆՊԱՏԱԿ 1

Կրթական ծրագրերի և դասավանդման մեթոդների բարեփոխում և արդիականացում Ընթացիկ ծրագիր և արդյունքների գնահատում

2012-2016 թթ.

	<i>1</i>	<i>2</i>	<i>3</i>	<i>4</i>	<i>5</i>
	Գործողություններ	Պատասխանատու	Կատարման ժամկետ	Գնահատման միջոցներ, վերահսկման գործիքներ	Հաջողության գրավական
1	Կրթական ծրագրերի վերանայում, չափանիշների հստակեցում	ռեկտոր, ուս. գիտ. գծով պրեռեկտոր, ամբիոններ	2012-2014 թթ.	գիտական խորհրդի որոշում, ներքին ինքնավերլուծություն և մշտադիտարկում, արտաքին աուդիտ	ակադեմիայի կրթական ծրագրերի իրականացման տասնամյակների փորձը, ակադեմիայի վարկը
2	ուսումնամեթոդական ծրագրերի վերանայում, վերամշակում	ուս. գիտ. գծով պրեռեկտոր, դեկաններ, ամբիոններ	2012-2016 թթ.	ամբիոնների քննարկումներ, ուսումնամեթոդական ծրագրերի, մեթոդական նյութերի առկայություն	ամբիոնների փորձը, դասախոսական կայուն կազմը
3	կրեդիտների փոխանակման կարգի մշակում	ուս. գիտ. գծով պրեռեկտոր, ամբիոններ, կրթական բարեփոխումների և ուսումնական վարչություն	2012-2013 թթ.	ռեկտորատի որոշում, կրեդիտ, փոխանակման կարգի առկայություն	կրեդիտային համակարգով ուսումնական ծրագրերի առկայությունը, արտաքին կապերի առկայությունը
4	Կրթական ծրագրերի և կրեդիտային համակարգի կիրառելիության ապահովում և տեղեկատվական փաթեթի վերանայում	ուս. գիտ. գծով պրեռեկտոր, կրթական բարեփոխումների և ուսումնական վարչություն	2012-2016 թթ.	ուսանողների և դասախոսների հարցումներ, տեղեկատվական փաթեթի առկայություն	կրեդիտների ներդրումով կրթական ծրագրերի առկայությունը

	1	2	3	4	5
5	Կրթական ծրագրերի իրականացման և ուսուցման մեթոդների արտասահմանյան փորձի ուսումնասիրում	ռեկտոր, ուս. գիտ. գծով պրեռեկտոր, արտաքին կապերի վարչություն, ամբիոններ	2012-2016 թթ.	ռեկտորատի քննարկումներ, դասախոսների, ուսանողների հարցումներ	ակադեմիայի փորձը, արտաքին կապերի վարչության առկայությունը, արտաքին համագործակցության պայմանագրերը
6	Ուսանողների գիտելիքների գնահատման համակարգի կատարելագործում	ուս. գիտ. գծով պրեռեկտոր, դեկաններ, ամբիոններ	2012-2013 թթ.	ամբիոնների քննարկումներ և որոշումներ, դասախոսների, ուսանողների հարցումներ	որակի ապահովման կենտրոնի առկայությունը, ամբիոնների աշխատանքային փորձը
7	Արտաքին շահառուների, հնարավոր գործատուների, ՀՀ նկարիչների և դիզայներների միությունների հետ համագործակցություն	ռեկտոր, ուս. գիտ. գծով պրեռեկտոր, դեկաններ, ամբիոններ	2012-2016 թթ.	հանդիպումներ շահառուների, ապագա գործատուների, շրջանավարտների հետ, շահառուների հարցումներ	համագործակցության պայմանագրերի, համատեղ ծրագրերի առկայություն
8	Ըստ մասնագիտությունների՝ ընդունելության տարբերակված պահանջների սահմանում, դիմորդներին իրազեկում	ռեկտորատ, ամբիոններ, ֆակուլտետների դեկանատներ	2012-2016 թթ.	ռեկտորատի, ամբիոնների, դեկանատների քննարկումներ և առաջին կուրսի ուսանողների հարցումներ	ընդունելության տարբերակված ծրագրերի և դրանց վերաբերյալ տեղեկատվական փաթեթի առկայությունը
9	Դասախոսական համակարգի կայունացում, դասախոսների խրախուսում, կարիերայի աճ	ռեկտոր, ուս. գիտ. գծով պրեռեկտոր, դեկաններ, ամբիոններ	2012-2016 թթ.	ռեկտորատի քննարկումներ, վիճակագրական տվյալներ	ֆինանսական կայուն ռեսուրսները, դասախոսական կազմի սերնդափոխության կայացած ավանդույթը, ասպիրանտուրայի առկայությունը
10	Հետբուհական կրթական հետազոտական ծրագրի մշակում և իրականացում	ուս. գիտ. գծով պրեռեկտոր, կերպարվեստի տեսության ամբիոն	2012-2016 թթ.	հետբուհական հետազոտական ծրագրի առկայություն, գիտական թեզերի պաշտպանության վիճակագրություն	ասպիրանտուրայի և գիտական աստիճան ունեցող դասախոսական կազմի առկայությունը

	1	2	3	4	5
11	Դասախոսական և վարչական հաստիքների պլանավորում և օպտիմալացում	ամբիոններ, մարդկային ռեսուրսների վարչություն	2012-2013 թթ.	մարդկային ռեսուրսների վարչության վերլուծություն և հաշվետվություն, ռեկտորատի քննարկումներ	պլանավորման առկայությունը, վիճակագրական հետազոտությունը, որակի ապահովման կենտրոնի առկայություն
12	Նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսների կայունացում	տնտես. գծով պրեռեկտոր, ֆինանսական և հաշվապահական վարչություն	2012-2014 թթ.	ռեկտորատի քննարկումներ, դասախոսների և ուսանողների հարցումներ	ֆինանսական նախահաշիվների, հաշվապահությունների առկայությունը և ռեսուրսների վերլուծությունը, որակի ապահովման կենտրոնի առկայությունը
13	Ակադեմիայի տեղեկատվական կայքի թարմացում	ռեկտոր, արտաքին հարաբերությունների վարչություն	2012-2016 թթ.	ներքին և արտաքին շահառուների հարցումներ	տեղեկատվական կայքի առկայությունը, ակադեմիայի վարկը, արտաքին կապերը

ՆՊԱՏԱԿ 2

Ուսուցման որակի ապահովման գործընթացների հստակեցում ու իրականացման մեխանիզմների մշակում

	1	2	3	4	5
1	Որակի ապահովման կենտրոնի քաղաքականության և գործունեության հստակեցում	ռեկտորատ, որակի ապահովման կենտրոն	2012-2013 թթ.	ռեկտորատի որոշում, որակի ապահովման կենտրոնի քաղաքականության առկայություն	«Տեմպուս» ծրագրի մասնակցությունը, համապատասխան փորձի և ՀԲ-ի աջակցությունը
2	Որակի ապահովման կենտրոնի աշխատանքային ծրագրի վերանայում	ռեկտորատ, որակի ապահովման կենտրոն	2012 թ.	Քննարկումներ և արձագանքներ	որակի ապահովման կենտրոնի մշակած ծրագրի առկայությունը, աշխատանքային փորձը
3	Որակի ապահովման թափանցիկության ապահովում	որակի ապահովման կենտրոն	2012-2016 թթ.	ռեկտորատի և որակի ապահովման կենտրոնի որոշումներ	«Տեմպուս» ծրագրի համապատասխան փորձը և ՀԲ-ի աջակցությունը
4	Որակի մեխանիզմների հստակեցում, մշակում և կիրառում	ուս. գիտ. գծով պրեռեկտոր, դեկաններ, մասնաճյուղեր, ամբիոններ, որակի ապահովման կենտրոն	2012-2014 թթ.	ռեկտորատի, դեկանատների, ամբիոնների, որակի ապահովման կենտրոնի քննարկումներ և հարցումների արդյունքների վերլուծություն	ակադեմիայի կայուն ավանդույթներ, «Տեմպուս» ծրագրի համապատասխան փորձը և ՀԲ-ի աջակցությունը
5	Ակադեմիայի կառավարման համակարգի կատարելագործում	ռեկտորատ, որակի ապահովման կենտրոն	2012-2014 թթ.	բուհի ինքնավերլուծություն և արտաքին աուդիտ	կառավարման համակարգի փոփոխությունները, վարչակազմի վերապատրաստումները
6	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում	ռեկտորատ, որակի ապահովման կենտրոն	2012-2014 թթ.	ռեկտորատի քննարկումներ, հարցումներ	տեղեկատվական տեխնոլոգիաների առկայությունը, համապատասխան ծրագրերի առկայությունը

	1	2	3	4	5
7	Տարեկան ինքնավերլուծու- թյունների իրականացում՝ ծրագրային և ինստիտուցիոնալ մակարդակներով	ռեկտորատ, որակի ապահովման կենտրոն	2013-2016 թթ.	հրապարակումներ և որակի հավաստում որակի ապահովման կենտրոնի կողմից	«Տեմպուսի» շրջանակներում (QATMI, DIUS) համապատասխան փորձի առկայությունը

ՆՊԱՏԱԿ 3

Ակադեմիայի գործունեության
հետազոտական ոլորտի
զարգացում

	1	2	3	4	5
1	Մագիստրական կրթական ծրագրում հետազոտության ներառում	ու.ս. գիտ. գծով պրեռեկտոր, ամբիոններ	2012-2013 թթ.	հետազոտական ծրագրերի առկայություն	գիտական աստիճաններ ունեցող բարձր որակավորված դասախոսական կադրերի առկայությունը
2	Հետբուհական կրթական հետազոտական ծրագրերի վերամշակում և իրականացում	ու.ս. գիտ. գծով պրեռեկտոր, կերպարվեստի պատմության և տեսության ամբիոն	2012-2016 թթ.	գիտական խորհրդի քննարկում, հարցումներ, վերջնադրույքի գնահատում	կրեդիտների ներառմամբ հետբուհական հետազոտական ծրագրերի առկայությունը
3	Դասախոսական համակազմի հետազոտական գործունեության պլանավորում և խրախուսում	ու.ս. գիտ. գծով պրոռեկտոր, ամբիոններ	2012-2016 թթ.	ամբիոնների որոշումներ, մշտադիտարկում, հրապարակումներ, ցուցահանդեսներ տեղական և միջազգային մակարդակներում	տեսական ամբիոնների դասախոսների հետազոտական թեմաների պլանավորման առկայությունը
4	Միջազգային դրամաշնորհների մասնակցություն	ու.ս. գիտ. գծով պրոռեկտոր, ամբիոններ, արտաքին կապերի վարչություն	2012-2016 թթ.	համապատասխան պայմանագրերի, դրամաշնորհային ծրագրերի առկայություն	«Տեմպուսի» և նմանատիպ այլ ծրագրերի իրականացման փորձը, փորձառու դասախոսական կազմը
5	Համատեղ (ՀՀ ԳԱԱ-ի, ՀՀ և արտերկրների բուհերի հետ) հետազոտական գործունեության նախաձեռնում	ու.ս. գիտ. գծով պրոռեկտոր, ամբիոններ, արտաքին կապերի վարչություն	2012-2016 թթ.	համատեղ ծրագրերի առկայություն, դասախոսների հարցումներ, հրապարակումներ, ցուցահանդեսներ տեղական և միջազգային մակարդակներում	ՀՀ ԳԱԱ-ի հետ համագործակցման պրակտիկա

	<i>1</i>	<i>2</i>	<i>3</i>	<i>4</i>	<i>5</i>
6	Հետազոտական հաջողված թեմաների հրատարակության ապահովում	ուս. գիտ. գծով պրոռեկտոր, ամբիոններ	2012-2016 թթ.	ամբիոնների քննարկումներ, հարցումներ, մշտադիտարկում, հրապարակումներ, ցուցահանդեսներ տեղական և միջազգային մակարդակներում	հրատարակված մենագրությունների, ԵԳՊԱ-ի ամենամյա հրատարակվող տեղեկագրի առկայությունը

ՆՊԱՏԱԿ 4

Ակադեմիայի միջազգային կապերի զարգացում և ուսանողների շարժունության ակտիվացում

	1	2	3	4	5
1	Արտաքին կապերի վարչության գործունեության հստակեցում, քաղաքականության լրամշակում	ռեկտորատ, արտաքին կապերի վարչություն	2012-2013 թթ.	ռեկտորատի որոշում, քաղաքականության և ծրագրի առկայություն, դասախոսների, ուսանողների հարցումներ	արտաքին կապերի վարչության, որակի ապահովման կենտրոնի գործունեությունը
2	Դասախոսների և ուսանողների շարժունության ռազմավարական ծրագրի վերամշակում	ռեկտորատ, արտաքին կապերի վարչություն	2012-2013 թթ.	դասախոսների, ուսանողների շարժունությունը հավաստող շնորհանդեսային նյութերի առկայություն, ակադեմիայի կայքով արձագանքներ	արտաքին կապերի վարչության, որակի ապահովման կենտրոնի առկայությունը
3	Ուսանողների դրամաշնորհային ծրագրերի մշակումների աջակցություն	արտաքին կապերի վարչություն, ամբիոններ	2012-2016 թթ.	ուսանողների հարցումներ	արտաքին կապերի վարչության առկայությունը, «Տեմպուսի» ծրագրերի մասնակցությունը
4	Արտասահմանցի ուսանողներին տրամադրվող ծառայությունների բարելավում, ընդունելության պլանավորում	ու.ս. գիտ. գծով պրոռեկտոր, արտաքին կապերի վարչություն	2012-2016 թթ.	արտասահմանցի ուսանողների հարցումներ, ակադեմիայի կայքում տեղեկատվության առկայություն	արտասահմանցի ուսանողների ընդունելության փորձը
5	Արտասահմանցի շրջանավարտների հետ կապերի ակտիվացում	արտաքին կապերի վարչություն	2012-2016 թթ.	արտասահմանցի շրջանավարտների հետ կապերը հավաստող փաստեր, ակադեմիայի կայքում արձագանքներ	արտաքին կապերի բաժնի առկայությունը, որակի ապահովման կենտրոնի առկայությունը

ՆՊԱՏԱԿ 5

Հասարակությանը մատուցվող ծառայությունների և դրանց իրականացման ուղիների հստակեցում

	1	2	3	4	5
1	Մշակույթի ոլորտի բարձր որակավորման կադրերի պատրաստում	ռեկտորատ, մասնագիտական ամբիոններ	2012-2016 թթ.	հասարակական հարցումներ, հարցումներ գործատուների շրջանում	ակադեմիայի ամփոփիչ հանձնաժողովների նախագահների եզրակացությունները
2	Կրթական ծրագրերի մասին հասարակությանը իրազեկում	ու.ս. գիտ. գծով պրոռեկտոր, ուսումնական վարչություն, արտաքին կապերի վարչություն	2012-2016 թթ.	հասարակական հարցումներ, ակադեմիայի կայքում արձագանքներ	ակադեմիայի տեղեկատվական կայքի, կրթական ծրագրերի տեղեկատվության փաթեթի առկայությունը
3	Հասարակական պահանջների ուսումնասիրում և լրացուցիչ կրթական ծրագրերի մշակում	ու.ս. գիտ. գծով պրոռեկտոր, որակի ապահովման կենտրոն, մասնագիտական ամբիոններ	2012-2016 թթ.	ռեկտորատի որոշումներ, լրացուցիչ կրթական ծրագրերի առկայություն, արտաքին շահառուների հարցումներ, զեկույցներ	մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը, ակադեմիայի վարկը
4	Մշակութային միջոցառումների կազմակերպում հանրապետության տարբեր տարածքներում	ղեկաններ	2012-2016 թթ.	միջոցառումները հավաստող փաստերի, շահառուների արձագանքների առկայություն	ակադեմիայի բարձր վարկը, Գյումրիի, Դիլիջանի մասնաճյուղերի առկայությունը
5	Արտաքին շահառուների հետ հետադարձ կապի ստեղծում	արտաքին կապերի բաժին, մարդկային ռեսուրսների վարչություն	2012-2016թթ.	շահառուների հետ հետադարձ կապերը հաստատող փաստաթղթերի առկայություն, հասարակական հարցումներ	որակի ապահովման կենտրոնի առկայությունը, արտաքին շահառուների տեղեկատվական բազայի առկայությունը
6	Գեղարվեստական նոր գաղափարների քարոզում, ակադեմիայում մշակութային կենտրոնի ստեղծում	ղեկաններ, մասնագիտական ամբիոններ	2012-2014 թթ.	ղեկանատի քննարկումներ, հասարակական հարցումներ, ակադեմիայի մշակութային կենտրոնի առկայությունը	ակադեմիայի ցուցասրահի, մասնագիտական ամբիոնների առկայությունը

	1	2	3	4	5
7	Ակադեմիայի շրջանավարտների հետ կապերի ակտիվացում	մարդկային ռեսուրսների վարչություն, որակի ապահովման կենտրոն	2012-2016 թթ.	շրջանավարտների հետ կապերը հավաստող փաստաթղթերի առկայություն, հարցումներ	շրջանավարտների տեղեկատվական բազայի առկայությունը, որակի ապահովման կենտրոնի առկայությունը
8	Ակադեմիայում կազմակերպված միջոցառումներին այլ բուհերի ուսանողների և դասախոսների ընդգրկում	ուսխորհուրդ, դեկաններ	2012-2016 թթ.	ուսխորհուրդի միջոցառումների պլանի առկայություն, այլ բուհերի ուսանողների մասնակցությունը հավաստող տվյալներ	ուսխորհուրդի և դեկանատների համապատասխան փորձը
9	Հասարակության հետ կապերի կառավարման լրացուցիչ ծրագրի վերամշակում և իրականացում	ուս. գիտ. գծով պրոռեկտոր, արտաքին կապերի վարչություն	2012-2013 թթ.	վերամշակված ծրագրի առկայություն, դասընթացների իրականացում, շահառուների արձագանքներ	«Տեմպուս» ծրագրի մասնակցությունը, համապատասխան մասնագետի առկայությունը
	Արցախում, ՀՀ զինված ուժերի զորամասերում մշակութային միջոցառումների կազմակերպում	դեկաններ	2012-2016 թթ.	կազմակերպված միջոցառումները փաստող տվյալների, արձագանքների առկայություն	ակադեմիայի դասախոսական և ուսանողական ներուժը

Տպագրվել է «ԶԱՆԳԱԿ» տպագրատանը